ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 12, 1956 Общественные науки

Ռ. Աբրահամյան

ՍՏԵՓԱՆՈՍ ԴԱՇՏԵՑԻ

Ստեփանոս Բասիլիոս Շիրուփալակյանը, որը հայ գրականության հայտնի է նաև Ստեփանոս Դաշտեցի անունով, հայ մատենագրության աչքի ընկնող դեմքերից է։ Նրա մասին խոսել են Ղ. Ալիշանը[1], Մ. Զամչյանը[2], Հ. Տաշյանը[3], Գ. Զարբհանալյանը[4] և Հ. Տեր-Հովհանյանը[5]։ Փոքրիկ բիբլիոգրաֆիա իր «Անձնանունների բառարան»-ում հրատարակել է պրոֆ. Հ. Աճառյանը[6]։ Դաշտեցու մասին, համեմատաբար, ընդարձակ խոսել է Սուբիաս Սոմալը իր «Հայ գրականության պատմությունը» իտալերեն աշխատության մեջ[7]։

Մեր հեղինակի մասին վերջին տարիներին լույս տեսած ուսումնասիրություններից ուշադրության արժանի են բանասեր Սիմոն Սիմոնյանի «Ստեփանոս Դաշտեցի նորահայտ աշուղ մը» *վերնագրով հոդվածը, որը հրատարակվել է «Անահիտ» ամսագրում[8], պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանի մի ուսումնասիրությունը՝* «Սաեփանոս Դաշտեցու հանելուկները» *վերնագրով, որը հրատարակվել է «Էջմիածին» ամսագրում[9], և պատմական գիտությունների թեկնածու Ս. Մելիք-Բախշյանի* «Ստեփանոս Դաշտեցու մի ժամանակագրության մասին»[10] *հոդվածը, որը լույս է տեսել Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետական համալսարանի* «Գիտական աշխատություններ»-ի *մեջ, որտեղ և հրատարակվել է Դաշտեցու* «Կարգ բագաւորաց Հնդկաց» *խորագրով ժամանակագրությունը։*

Չնայած թվարկված հայագետների Դաշտեցու աշխատություններն ուսում-

---

1 Ղ. Ալիշան, *Այրարատ*, Վենետիկ, 1890, էջ 494։

2 Մ. Զամչյան, *Պատմութիւն Հայոց*, 3 րդ հատոր, Վենետիկ, 1786, էջ 494։

3 Հ. Տաշյան, *Ցուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*, Վիեննա, 1895, էջ 131—133, 642—643, 708—709։

4 Գ. Զարբհանալյան, *Հայկականք, թարգմանութիւնք նախնեաց*, Վենետիկ, 1889, էջ 213։ Նույնի՝ *Պատմութիւն հայ դպրութեան*, 2-րդ հատոր, Վենետիկ, 1878, էջ 441։

5 Հ. Տեր-Հովհաննիսյանց, *Պատմութիւն Նոր-Ջուղայու*, 2-րդ հատոր, Նոր-Ջուղա, 1858, էջ 32—33։

6 Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. դ, էջ 678։

7 «Quadro della storia littraria di Armenia» Sucias Somal. Venezia, 1829, p. 171—172.

8 «*Անահիտ*», 1939, № 2—3, էջ 51—68։

9 Պրոֆ. Ա. Աբրահամյան, *Ստեփանոս Դաշտեցու հանելուկները*, «*Էջմիածին*», 1947, № 1, էջ 46—54։ Ա. Գ. Աբրահամյանը իր ուսումնասիրության հավելվածում տպագրել է Դաշտեցու հանելուկները և սատիրական անտիպ մի բանաստեղծություն։ Ստեփանոս Դաշտեցու մասին Ա. Գ. Աբրահամյանը խոսել է նաև իր «Համառոտ բիբլիոգրաֆիա հայկական ՍՍՌ Մատենադարանի գրչագիր մանր ժամանակագրությունների» խորագրով աշխատության մեջ (տես «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», № 1-ին, Երևան, 1941, էջ 217)։

10 Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատությունների ժողովածու», Պատմական գիտությունների բաժանմունք, № 37, Երևան, 1955, էջ 118—132։

նասիրելու ուղղությամբ կատարած գնահատելի աշխատանքներին, այնուամենայնիվ, նրա բանաստեղծությունների զգալի մասը, ինչպես պարզվում է, մնում է չուսումնասիրված և չհրատարակված։ Կան նաև Դաշտեցու այնպիսի ստեղծագործություններ, որոնք թյուրիմացաբար վերագրվել են այլ հեղինակների և հրատարակվել նրանց անունով։

Մեր ներկա հաղորդման մեջ նպատակ ունենք ընթերցողին ծանոթացնել Դաշտեցու կյանքին ու գործունեությանը։ Հավելվածում, ընտրությամբ, կցում ենք Դաշտեցու ստեղծագործություններից միայն նրա քառյակներն ու բանաստեղծությունները։ Քառյակների մեջ կան այնպիսիները, որոնք հրատարակվել են արտասահմանյան հայ մամուլում։

* * *

Ստեփանոս Դաշտեցին չնայած մեզ մոտիկ ժամանակներում ապրած հեղինակ է, սակայն նրա կյանքի և գործունեության մասին փաստական տվյալներ շատ քիչ են մնացել։ Դաշտեցու կենսագրությունը կարելի է լինում ընդհանուր գծերով վերականգնել միայն նրա աշխատություններում պահված կցկտուր հիշատակությունների հիման վրա։

Դաշտեցին ապրել ու գործել է 17-րդ դարի երկրորդ կեսում և 18-րդ դարի առաջին քառորդում։ Նա իր ինքնագիր ձեռագրի մի հիշատակարանում, որը գրել է 1714 թվականին, ակնարկում է, որ ինքը «...ծեր է ամենևին»[1]։ Եթե 1714 թվականին նա, իրոք, ծեր է եղել, ապա այդ թվականին նա, առնվազն, 60—70 տարեկան պետք է եղած լիներ։ Այդ հիմքան վրա կարելի է ենթադրել, որ նա ծնված պիտի լիներ 17-րդ դարի 40—50-ական թվականներին։

Ստեփանոս Դաշտեցու ծննդավայրն է Նոր-Ջուղան։ Նրա ծնողները, ինչպես երևում է, Շահաբասի բռնագաղթի ժամանակ Նոր-Ջուղա են տեղափոխվել Գողթն գավառի Հին-Ջուղայի Դաշտ գյուղից, որից և նա վերցրել է իր Դաշտեցի մականունը։

Իր մի բանաստեղծության վերջում Դաշտեցին գրում է.

«Է անունն իմ Ստեփանոս,
Որ ի Դաշտէն եղէ սերեալ,
Թէպէտ հան իմ տեղափոխմամբ
Ի յԱսպահան եղև տարեալ»[2]։

Ստեփանոս Դաշտեցին, ինչպես կարծում է Սոմալը, եղել է ոմն Բարսեղ քահանայի որդի[3]։ Մենք չգիտենք, թե ի՛նչ աղբյուրից է օգտվել Սոմալը, սակայն Վիեննայի մատենադարանի սեփականությունը հանդիսացող Դաշտեցու մի ձեռագրի հիշատակարանում այդ մասին որոշակի տեղեկություն կա. «Որ եմ ամենանուաստ ծառայ...,—գրում է նա — ապիրատ... Ստեփանոս Բասիլիոս Շիրփալակեան, ի Դաշտէն Գողթնեաց, սերունդս յԱսպահանայ»[4]։ Բասիլիոսը, անկասկած, այստեղ եվրոպականացված Բարսեղն է։ Ենթադրություններ են եղել, որ Ստեփանոսն ունեցել է նաև Հովհաննես[5] և Փանոս[6] կրկնա-

[1] Հայկական ՍՍՌ Երևանի Պետական մատենադարան, ձեռագիր № 9049, թ. 155ա։
[2] Անթիլիասի ժողովածու, ձեռագիր № 36, էջ 212, 213։
[3] Հ. Տաշյան. Ձեռագրաց ցուցակ. էջ 709։
[4] «Qu dro della St ria littraria di Armenia» Sucias Somal, p. 171 „fia di un sacerdotc chiamato B silio".
[5] Նույն տեղում, էջ 171։
[6] Անթիլիասի ձեռագրերի ժողովածու, № 32, էջ 248։

նունները։ Վերջինը՝ Փանոս անունը, հավանական է, Ստեփանոսի կրճատված ձևն է։

Մեզ հասած հիշատակություններից երևում է, որ Դաշտեցին ստացել է իր ժամանակի բավական լավ կրթություն։ Նա իր աշխատության «Համառոտ ընդեռնումն վիճաբանութեան ընդդէմ հերձուածողաց ազգի» առաջաբանում, որ փաստորեն նամակ է ուղղված Հովհաննես Մրքուզին, հայտնում է, որ ինքն իր կրթությունն ստացել է Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքում, աշակերտել է Ստեփանոս Ջուղայեցուն՝ մասնագիտանալով փիլիսոփայական և աստվածաբանական գիտությունների մեջ. «...ի մանկութենէ վարժեալ և դաստիարակեալ ի դպրետանն ի ճեմարանին փիլիսոփայութեան և աստուածաբանութեան Ամենափրկչի վանացդ Նորոյ Ջուղայի և աշակերտեալ Ստեփանոսի Խաչաշորդւոյ վարդապետողի վանացդ»[1]։

Ըստ Սոմալի վկայության, որը հավանական է օգտվել է Վատիկանի ձեռագրական աղբյուրներից, Դաշտեցին իր սկզբնական կրթությունը Սպահանում ստանալուց հետո, շարունակել և խորացրել է Հռոմում, Վատիկանի բարձրագույն դպրոցում[2]։

Ստեփանոսն իր ժամանակի բարձր կրթության և մեծ կուլտուրայի տեր անձնավորություն է եղել։ Այդ է վկայում նրա թողած գրական ժառանգությունը։ Այն փաստը, որ նա տիրապետել է գրաբարին, պարսկերենին, տաճկերենին, վրացերենին, ադրբեջաներենին, լատիներենին և հնդկերենին, վկայում է նրա զարգացման և բարձր կուլտուրայի մասին։ Նրա բարձր կրթության մասին խոսում է նաև այն փաստը, որ նա իր աշխատություններում օգտագործել է մեր հին և միջնադարյան հայ մատենագրության աչքի ընկնող գրեթե բոլոր հեղինակներին. իր աշխատությունների մեջ նա քաղվածքներ ունի արած Ագաթանգեղոսից, Մովսես Խորենացուց, Դավիթ Անհաղթից, Գրիգոր Նարեկացուց, Գրիգոր Տաթևացուց, Ներսես Կլայեցուց և միջնադարյան բազմաթիվ այլ մատենագիրներից։

Նրա թողած գրական ժառանգությունը, ընդհանրապես, աչքի է ընկնում կուռ տրամաբանությամբ և քաջատեղյակ ծանոթությամբ ինչպես հայ ժողովրդի ժամանակակից իրականությանը, այնպես և անցյալի հետ։ Ըստ Սոմալի վկայության, «նա հմուտ և վարժ էր ո՛չ միայն հայ, այլև եվրոպական գիտության»[3]։ Նա այնքան պատրաստված անձ է եղել, որ համարձակվել է վեճի մեջ մտնել ժամանակի այնպիսի զարգացած անձնավորությունների հետ, ինչպիսիք էին Հովհաննես Մրքուզը և Աղեքսանդր Ջուղայեցին։

Դաշտեցին չնայած գրել է կրոնական աշխատություններ ևս, զբաղվել է անգամ կրոնական վիճաբանությամբ, սակայն նա հոգևորական չի եղել։ Աշխարհական լինելու մասին մի տեղ նա որոշակի գրել է. «Քանզի եմ տրուպս աշխարհական և ոչ վարդապետ...»։

Դաշտեցին զբաղմունքով վաճառական է եղել։ Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 8746 և Երուսաղեմի Ս. Հակոբյանց մատենադարանի

---

[1] Հայկական ՍՍՌ Երևանի Պետական մատենադարան, ձեռագիր № 781, թ. 29ա (նույնը հմմտ. № 9049, թ. 5ա և № 81, 11 թ. 4ա)։

[2] S. Somal, «Quadro della Storia littraria di Armenia», p. 172.

[3] Նույն տեղում։

[4] Հ. Տաշյան. Ցուցակ ձեռագրաց, էջ 132։

№ 346 ձեռագրերում պահպանվել է Ստեփանոս Դաշտեցու մի նամակի ընդօրինակությունը՝ ուղղված Աղեքսանդր Ջուղայեցուն, ուր նա հայտնում է, որ ինքն անվերջ շրջագայության մեջ է «վաճառականութեան աղագաւ»։

Նա իր «Հակաճառութիւն» աշխատության «Խնդիր ճշմարտութեան» բաժնում կրքոտ կերպով պաշտպանում է այն քաղաքականությունը, որը վարելիս է եղել Տոսկան դուքսը Լիվոռնիայի նավահանգստում՝ հրավիրելով այնտեղ զանազան ազգերի վաճառականների։

Ինչպես վերոհիշյալ նամակից, այնպես էլ նրա ձեռագրերի հիշատակարաններից երևում է, որ Դաշտեցին շրջագայել է բազմաթիվ երկրներ։ Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի ձեռագրերից մեկում պահվել է մեր հեղինակի մի հիշատակարանը, որից երևում է, որ նա իր շրջագայությունների ժամանակ եղել է Հնդկաստանում, Պարսկաստանում, Թուրքիայում, Հունաստանում, Իտալիայում և եվրոպական այլ երկրներում։ Գտնվելով բազմաթիվ երկրներում, նա շատ բան է տեսել ու սովորել, և այդ բոլորի հետևանքով դարձել է շրջահայաց, փորձառու, համբերատար և խոհուն։

Իր թափառումների մասին պատկերավոր հիշատակություն է թողել Ստեփանոս Դաշտեցին՝ Հովհաննես Մրքուզին ուղղված նամակում. «Ի մանկութենէ մինչև ցայս աւուր գլորեալ թաւալիմ երեսօք բոլորակի գնդին աշխարհիս... Երբեմն ի ծովերումն լսրռնելով յալեկոծութեանց և երբեմն ի մրրկոց և սառնամանիքոց և երբեմն ի տօթից խորշակաբերից տագնապով ի ցամաքի անցուցեալ, եղեալ միշտ նշդհի և պանդուխտ շրջագայելով երբեմն ի տանն Յունաց և ի յԱսիա և երբեմն ի տանն Ֆռանկից ի յԵւրոպա և մանաւանդ թէ ի բոլոր երկիրն Հնդկաց, միայն մտածելն լսողաց է տաղտկալի»[1]։

Սակայն Դաշտեցին, առևտրից բացի, ունեցել է շատ ավելի սիրած մի զբաղմունք, որը նա չի մոռացել՝ ուր էլ որ գնացել է. այդ նրա սիրած գրական, ստեղծագործական աշխատանքն է։ Դաշտեցու մեզ հասած գրական ժառանգության մեծ մասը գրված է նրա շրջագայության տարիներին, աշխարհի տարբեր անկյուններում՝ Պարսկաստանում, Հնդկաստանում, Իտալիայում, Թուրքիայում, Հունաստանում և այլուր։

Ստեփանոս Դաշտեցու ստեղծագործական բեղուն շրջանը եղել է մոտավորապես 17-րդ դարի վերջին երկու տասնամյակները և 18-րդ դարի առաջին քառորդը։ Դաշտեցու մեզ հասած ընդօրինակած ձեռագրերից հնագույնը գրված է 1684 թվականին, իսկ նորագույնը՝ 1714 թվականին[2]։

* * *

Դաշտեցին գրել է տարբեր թեմաներով — գրել է պատմական և կրոնական աշխատություններ, բանաստեղծություններ, քառյակներ, թաջնիսներ, հանելուկներ, հետաքրքրաշարժ վարժություններ և այլն, որոնց զգալի մասը, բարեբախտաբար, հասել են մեզ։

Ստեփանոս Դաշտեցու մեզ հասած ստեղծագործություններից մեծ արժեք ունեն նրա տաղերը և թաջնիսները, որոնք հիմնականում ընդօրինակված են Անթիլիասի Կաթողիկոսարանի № 32 ձեռագրում։ Այս ձեռագրի լուսանկարն

---

[1] Հայկական ՍՍՌ Երևանի Պետական մատենադարան, ձեռագիր № 781, թ. 29ա։
[2] Նույն տեղում, ձեռագիր № 9049, թ. 155ա։

անցյալ տարի Լիբանանի Անթիլիաս քաղաքից բերել է պրոֆ. Ա. Աբրահամյանը։

Անթիլիասի Կաթողիկոսարանի մատենադարանի № 32 ձեռագիրը հայտնի է հայագիտության մեջ. նա ժամանակին պատկանելիս է եղել պոլսեցի Հովհաննես ավագ քահանա Մկրյանին։ Նրա նկարագրությունը, բանաստեղծությունների հետ միասին, տրամադրել է «Լումա» հանդեսի խմբագրությանը հրատարակելու։ Վերջինս հրատարակել է ձեռագրի նկարագրությունը և երեք բանաստեղծություն՝ երկուսը Նաղաշ Հովնաթանից, մյուսը Ստեփանոս Դաշտեցուց՝ ներկայացնելով որպես «ժողովրդական բանաստեղծության նմուշներ»։ Երկրորդ անգամ այս ձեռագրերի մասին Դաշտեցու չափածո ստեղծագործությունների կապակցությամբ, մանրամասն խոսել է հայագետ Սիմոն Սիմոնյանն իր «Ստեփաննոս Դաշտեցի, նորահայտ աշուղ մը» խորագրով հետաքրքրքրական հոդվածում («Անահիտ», 1939 թ., ապրիլ-մայիս, № 3, էջ 61)։ Ձեռագիրը բովանդակությամբ զանազան նյութերի ժողովածու է, ժամանակն է 1754 թ., գրիչն է Պետոս դպիրը, գրչության վայրն է Բանկալա վանքը։

Անհրաժեշտ ենք համարում ստորև տալ Դաշտեցու աշխատությունների բիբլիոգրաֆիան։

1. «Համառոտ բնձնումն վիճարանութեան ընդդէմ հերձուածողաց ազգին մերոյ», ՀՊՄ, ձեռ. № 8111, թ. 1բ—223ա. № 9049, թ. 3ա—185ա. № 871, թ. 1ա—84ա, Վիեննայի Միխիթարյանների մատենադարանի № 20 ձեռ., թ. 1ա—50բ. նույն մատենադարանի № 284 ձեռ., թ. 5ա—61 բ. նույն մատենադարանի ձեռ. № 252, թ. 2ա—49բ։

2. «Կարգ բազաւորաց Հնդկաց». ՀՊՄ, ձեռ. № 1786, թ. 42բ—43բ։

3. «Հանելուկ» արարեալ ուսեմնէ Ստեփաննոսէ Դաշտեցւոյ». գրված չափածո, բառատող, ՀՊՄ, ձեռ. № 1786, թ. 54բ—55բ։

4. «Տղայական ճարտասանութիւն», մաթեմատիկական զվարճալի, հետաքրքրաշարժ խնդիրներ և վարժություններ, որոնք հայ մատենագրության մեջ կոչվում են «խրախճանական»-ներ ՀՊՄ, ձեռ. № 1786, թ. 54ա—55ա։

5. «Ոտմ շարադրեալ ի Ստեփաննոսէ Դաշտեցւոյ, սակս արձանագրութեան եկեղեցւոյն սուրբ առաքելոյն Թովմայի, որ ի յԱգուլիս, ի խնդրոյն Տեառն Օհանու արքեպիսկոպոսի և առաջնորդին Գեղբանաց նահանգի» (Անթիլիասի Կաթողիկոսարանի ձեռ. № 36, էջ 212—215)։

6. «Նոր Ջուղայու մեծամեծաց վատ և անկարգ արարմանց վասն», ոտանաւոր, զոր շարադրել է դաշտեցի Փաւնոսն աշխարհաբար» (նույն ձեռագիրը, էջ 248—253)։ ՀՊՄ, ձեռ. № 1787 էջ 65բ—66բ։

7. «Եւ հանդերձիւ միայն երեալ վարդապետ ոմանս, որ ձեռնամ իրեն զգիտունս. բնրեսս երկայն մորուքն իւրեանց» (նույն ձեռագիրը, էջ 253—255)։

8. «Ջուղայեցւոց հայերէնի գրոց պարզ լեզուն այ, զոր կու պարծենունս» (նույն ձեռագիրը, էջ 255—257)։

9. «Թաջնիս հայերէն առ երախտամոռաց ոմանս, ի Ստեփանոսէ Դաշտեցւոյ» (նույն ձեռագիրը, էջ 257—258)։

10. «Թաջնիս Ստեփաննոսի վիրաւորի հայերէն» (նույն ձեռագիր, էջ 259—260)։

11. «Ա՜հ, ա՜հ, հազար ա՜հ (նույն ձեռագիրը, էջ 260)։

12. «Հայերէն թաջնիս Ստեփանի» (նույն ձեռագիրը, էջ 261—262)։

13. «Թաջնիս Ստեփաննոսի նահատակի, հայերէն» (նույն ձեռագիրը, էջ 262—263)։ Անտիպ։

14. «Թաջնիս Ստեփաննոսի» (նույն ձեռագիրը, էջ 263—264)։

15. «Մահն ի հայեւարի» (նույն ձեռագիրը, էջ 265—267)։

16. «Եւ ոմն ուրացող և մակացու, Աղափիրի՝ կոչեցեալ ծերունի Ջհանգիրեան հուտսաէ Ստեփաննոսի գովարանութիւնմ և պարսաւանմ. ոտանաւորիմ շարադրեալ» (նույն ձեռագիրը, էջ 267—268)։

17. «Զայի թախա քարվանսարային, վասն որմ, շարադրեալ ի նոյնոյ Ստեփանոսէ» (նույն ձեռագիրը, էջ 268)։

18. «Ոտմ շարադրեալ սակս անիրաւ Նազարէթին Լիվոնու, Ստեփանոսէ Դաշտեցւոյ, ի թուին Փրկչին 1702։ Յուլիս է» (նույն ձեռագիրը, էջ 269—270)։

19. «Հայեւար բաչնիս ի նոյն Ստեփանոսէ» (նույն ձեռագիրը, էջ 271)։

20. «Ոտմ չարադրեալ ի նոյն Ստեփանոսէ Դաշտեցւոյ ի վերայ այլ և այլ իրաց» (նույն ձեռագիրը, էջ 272—283)։

21. «Գանգատ ըստ գանգատաց ապստամբողին անձին նոյնոյ մեղապարտի Ստեփաննոսի ումեմն Դաշտեցւոյ» (Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի ձեռ. № 20, թ. 50բ—51ա)։

22. «Նուիրմունք առ Սուրբ Կոյսն երջանիկ և ապաստանարարութիւն առ մայրն գթութեան» (ՀՊՄ, ձեռ. № 8746, թ. 2ա—3ա, թերի, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանի ձեռ. № 346բ—180ա։

23. «Ոտնաչարութիւն ի վերայ նոր չուղայեցւոց, ասացեալ Ստեփանոսի Դաշտեցւոյ», 27 տներից սատիրական բանաստեղծություն նոր-չուղայեցիների վրա։ Ընդօրինակված է ՀՊՄ-ի № 1786 ձեռագրում (թ. 65բ—66ա)։ Անթիլիասի մատենադարանի № 62 ձեռագիր 248—253 էջերը։

24. Միծաղելոյ վարսաղ Ստեփաննոսի Դաշտեցւոյ», սատիրական բանաստեղծություն հայատառ ադրբեջաներեն, որը մինչև այժմ չի հրատարակված։ Ընդօրինակված է ՀՊՄ-ի № 1786 ձեռագրում, թ. 67։

Ստորև բերում ենք Դաշտեցու բանաստեղծություններն ու բառյակներն ընտրությամբ.

ԹԱՉՆԻՍ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ

Սիրէլի, էս բանիս մին լաւ դատ արա.
Թէ կնկան մին մարդ այ՝ մարգին մին ույ կէն.
Ինչ տան որ կին չկայ, տունն դադար այ[1],
Էս աշխարհիս աւերն ածեց մինակ կին։

Տանդ հագար հաց կայ՝ օրն մէկրն կէր,
Երկու տեսարանաց լոյսն մէկ ընդէր[2].
263 || Կինն է անճարութեան մարգիս մէկ ընկեր.
Մէկ էլ՝ որ տէրն վայ կուտայ մինակին[3]։

Երբ, որ համբերեցի, չարի՝, չ'արչարի[4].
Աստուած չի տար ինձ չար, երբ ես չար չարի[5].
Անխելքն թող կնկան ձեռնէն չարչարի,
Ոմանք գիտեն մին նա մարդ այ՝ մին նայ կին։

Փոխեց համբդ, չափէն և ել աղ տալից[6]=.
Թէ քոյ կերակրիդ չափաւոր աղ տա՝ լից.
Աշխարհս է սուտ, փուչ և ունայն, աղտալից.
Ինչ ունես տուր մին մարդարտին, մին ակին[6]։

Սրա քո բանդ՝ հապով[7], մի կալ[8] ուրիշին.
Որ 'ամէն մարդ դարման կու տայ՝ ուր իշին[9].
Չին հին մարդկանց ժամանակնէրն ուրիշ ին[10].
Շատվորն էսօր էրնէկ կուտայ մինակին։

Նոր խոջէքս մատնիք ունին՝ ակ[11] չունին.
Լճէրիցն ջուր կու խմեն ակ[12] չունին.
Ինչ աղին[13] որ աչացուք են[14], ակ չունին.
Դիշեր ցերեկ էրնեկ կու տան մին ակին[15]։

---

[1] Հանդիստ է։ [2] Ընկել։ [3] Միայնակին։ [4] Զարչարաեցի։ [5] Զարություն կարելի է։ [6]=-Աչք։ [6] Դառավ։ [6] Թանկագին քար։ [7] Շտապով։ [8] Մի՛ նայիր, մի սպասիր։ [9] Էշին։ [10] Ուրիշ էին։ [11] Մատանու ակ իմաստով։ [12] Աղբյուր։ [13] Մարդիկ։ [14] Կույր են։ [15] Միակնանուն։

ԹԱՋՆԻՍ՝ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՆԱՀԱՏԱԿԻ՝ ՀԱՑԵՐԷՆ

Ճշմարաին դէմ՝ ով որ ներհակ[1] կու խօսի,
Առանց կարծիք՝ նա ստոխ այ, սատանայ,
Նետք կու աեղայր՝ երր քո բանդ կու խօսի,
Զարն կասէր թող նետէրս սա տա նայ[2]։

Ո՛վ մեղանչեց՝ դխջումս արար այն մեղին[3].
Մեղայ կանչեց՝ ես մատաղ եմ այն մեղին[4],
Կու խնդրեմ, որ միշտ դու օգնես անմեղին,
Որ չմաղէ՝ մաղումն գնայ սատանայ։

Զգիտեմ սա որ ազգէն է, որ տանէ.
Կամ թէ այս փողոցիս միջին որ տանն է.
263 Մարդ պակաս այ այսքան ցաւիս՝ ‖ որ տանէ.
Որ, բոչ ցաւ դայ ինձ կասեն թէ սա տանայ[5]։

Հայոց ազգէս շատ ցաւ ունիս ամանած[6],
Ամանդ է մէծ՝ հաւաքէ, տար, աման ած.
Զուր յՄրր տանջես գիս եւ մանես[6], ա մանած.
Դու կու փախես՝ էլ ինձ կասեն սա տան այ[7]։

Ստեփանիս արարքն էն է եւ գործն՝ էն.
Դու կու դատես՝ արարմունքսէն[8] եւ գործէն.
Երր ճոթ գործողանի[9] ունէիր՝ էս գործէն.
Աշխարհքումս էլ ի՞նչ պետք էր սատանայ[10]։

261 ՀԱՅՑԻԱՐ ԹԱՋՆԻՍ՝ ՍՏԵՓԱՆԻ

Սուտ աշխարհիս խաբլանքին[1] շատ[2] չաւատաս.
Ի՞նչ գուհար կայ՝ թէ քո գլխից կուտ անէ[3],
Աւետրանի բանէն ի գատ չաւատաս՝
Որ վերջն քեզ առ խաւարն կու տանէ[4]։

Ի՞նչ փոս տեղ կայ՝ երկնից ցօղն այնում է[5].
Զար մարդն էստեղս ի՞նչ ուզում է, անում է.
Ժանգ կիտեղն[6] մարդիս մեկ փուչ անում է՝
Թէ չէ՝ դաշխարհս շալակած ով կու տանէ։

Աշխարհս ունի սիրուն քաղաք, սիրուն գեղ[8].
Կու քաղցրանայ՝ մարդիս կառնէ սիրուն, գեղ[9].
Կուտայ սիրուն տեսք եւ հասակ՝ սիրունգեղ՝
Վերջն կուղէ մարդի ոսկրից կուտ տանէ։

Զգիտեմ թէ մարդ մարդի վատ է՞ր կանէ.
Վեր ծովի եմք՝ վգներիս ծանր էրկան է[10].
Մեք ճամփորթ եմք, մեր ճանապարհն էրկան է՝
Առնուլ պիտիմք հաց, ու ջուր, ու կուտ՝ [11]ա տանէ[12]։

262 ‖ Խեւ Ստեփան, փշով այդւոյդ պատէ պատ.[13]
Աչուէրդ բաց՝ ճակատիդ դեմ պատ է, պատ.
Հազար տարի գլուխդ տաս պատէպատ՝
Քոյ ուտմունքդ [14] մէկ ճոթ էրած կուտանէ[15]։

---

[1] Հակառակ։ [2] Սա տա նրան։ [3] Մեղայլին։ [4] Մեղավորին։ [5] Սա տանի։ Պտտել չարչարել իմաստով։ [6] Պտտել։ [7] Սա տանն է։ [8] Արարմունքից։ [9] Կտոր գործող։ [10] Սատանա։

[1] Խարեբայություններին։ [2] Բնագրում — զաs: [3] Կուտակի։ [4] Կտանի։ [5] Նրա մեջ է։ [6] Դրամ հավաքելը։ [7] Կտանի։ [8] Գյուղ։ [9] Գեղեցիկ։ [10] Աղորիք է։ [11] Ուտելիք։ [12] Տանից։ [13] Ցանկապատիր։ [14] Կերածդ։ [15] Կիսայրած հաց է։

271 ՀԱՑԵՒԱՐ ԹԱՋՆԻՍ Ի ՆՈՑՆՈՑ ՍՏԵՓԱՆՆՈՍԷ

Եկ ինձ ասա այրն ի՞նչ է և էն ինչ.
Գիտեմ կասես՝ ուրիշ այրն այ, ուրիշ էն.
Մէկ տեղ մեղան՝ Ադամն ինչ այ, Եւէն ինչ,
Փաս՝[1] Էր կասես՝ ուրիշ էս այ, ուրիշ էն։

Բոլոր սրտիւ համատամ էն՝ որ մին այ[2].
Ողջիս կերպն[3] ջոկ ջոկ քաշած որմին այ[4],
Ճանապարհ շատ՝ ով գիտէ լաւ որ մինն այ[5].
Ամէնքն մէկ ճամփով կերթան ուրիշ չէն[6]։

Մարդոյս սեռն էրկքնոցէն[5] վէր՝ կու գայ.
Օհտիցն լաւ՝ էրկքնոց էն[6] վէր կու գայ,
Բեռ տանիլն էրկքնոցէն վէր կուգայ.
Բայց քաջութիւնն՝ ուր ձիանէն, ուր իշէն։

Խելքն լաւ է՝ ուր ձիաւորն, ուր անձին[8].
Ամէն մարդի մտքուն է իւրան՝ ձին.
Ողջ հաւաննէն իւրեանց խելքին, իւր անձին.
Մարդ չդտայ՝ դանդատ անէր իւր իշէն։

Գիրքն ծայլէ վարդապետ, տուր յիս, ուսայ.
Օծեալ սա է, փրկիչ սա է, Յիսուս սա.
Ո՜վ Ստեփան, քոյ ապաւէնդ Յիսուս այ.
Տերդ սա է՝ ի՞նչ ակն ունես ուրիշէն։

265 || ՄԱՀԸՆ Ի ՀԱԵՒԱՐ

Ի՞նչ ցորեն այ, ի՞նչ կուտ ա[յ][1],
Երբ ցրիւ չէ ի՞նչ կուա ա[յ][2].
Ապառաժին կու ցանես՝
Որ չի բուսնիլ՝ ի՞նչ կու տայ[3]։

Շրթունքդ է՝ իբր երկու լար՝
Գերւոյս համար Էր կու լար[4].
Ցաւէդ ով էր խնդացող՝
Որ ինձ կասին Էր կու լար[5]։

Աչքս դդեստիդ կապուց է[6]՝
Չի դողին չէ, կապուտ է[7].
Թշնամին ջանայ խզել՝
Երբ երկու սիրտ կապ ունէ[8]։

Աստուած միայն անեղն է[9],
Որ նիհարն է՝ անեղն է[10].
Ան որ բդսիրտ կու խոցէ՝
Պատճառն ունքիդ անեղն է[11]։

Ձեռուն ունէր հայելի՝
Չէ թող թէ պարզ հայէլ ի[12].
Է՞ր գիս կամիս փոփոխել,
Երբ իմ մօրէս հայ ելի[13]։

Բազումք կեցան շատ տարին՝
Մեղաց պտուղք շատ արրի[14].
Թագաւորք շատ ըսպանին՝
Թաշխարսարաւ[15] շատ արին։

---

[1] Այս դեպքում։ [2] Նույնն է։ [3] Բոլորիս պատկերը։ [4] Պատինէ։ [5] Որ մեկն է։ [6] Գյուղ։ [7] Երկնքից։ [8] Առանց ձիու։

[1] Լվանալուց հետո հացահատիկի մնացորդը։ [2] Կույտ է։ [3] Կտա։ [4] Կլիներ։ [5] Լաց կլիներ։ [6] Կապված էր։ [7] Կապույտ է։ [8] Կապված է։ [9] Զստեղծված է։ [10] Անյուղ է, այսինքը՝ դեր չէ։ [11] Աղեղն է։ [12] Նայեյի։ [13] Հայ ծնվեցի։ [14] Մեղքեր շատ գործեցին։ [15] Խռովություններ։

Ոսկիդ մըխսէ լողակին[16]՝
Ջուրն է հոգի լողակին[17].
266 Կին դու մեղաց ծոցն || անկար՝
Կամիս ապրիլ՝ լողա, կի՛ն։

Կերպդ է լուսոյ որակէն[18],
Ցայնց պարզ աղբիւրն՝ ո՞ր ակէն[19].
Տէրն քեզ որ զանձէն ընտրեաց,
Ո՞ր մարգարտէն, ո՞ր ակէն[20]։

Էս ինչ շոք այ՝ տապ այ կին,
Ջեռնումդ կուտապ այ[21]՝ կին.
Անգդամ կինն խորոմէ,
Կամ տապակէ մեջ տապակին[22]։

Վայ մինակիս մեկուսէ[23]՝
Սիրտս կայրի մեկո՛ւսէ[24].
Դուն Է՞ր կու տխրիս՝
Քո ապաւէնն՝ մէկ կուս է[25]։

Մարիամ կամի լալ՝ Աննա,
Թող ով կամի լալ՝ լայ նա[26].
Բամբասարարին լեզուն՝
Թո՛ղ կարակամի, լալանայ[27]։

Թէ էրկու չէ՝ մին ասա,
Մին դրուցէ, մին ասա[28]։
Օրհնանքը առ Աբրահամայ,
Աղօթքն սուրբ Մինասայ։

Մարդն է աղէկ կիննամոն[29],
Քոյրն արաւ կին՝ Ամոն[30].
Վարդափըթիթ թուխ վարսիդ,
Հոտն է Նարգոս[31], կինամոն։

259 || ԹԱՋՆԻՍ ՍՏԵՓԱՆԻ ՎԻՐԱԻՈՐԻ ՀԱՅԵՐԷՆ

Անուշ գինուն բամբասանքն Է՛ր կանես.
Մէկ պարզ ջուր այ, որ հանապազ մատնում այ[1].
Ջուր յե՛րբ աղաս[2], մի՛թե գինու էրկան[3] ես.
Ջաւ չե՛ս ասել՝ այգին ում այ, մատն ում այ[4]։

Տար աղերսս՝ տուին տակին տարածէ.
Երբ չտարւիս՝ ի՞նչ կու խազաս[5] տարուած է[6],
Քօքած դամբուռ[7] ունիմ, քեզ տամ, տար ածե[8],
Ի՛նչ գոյն[9] ածես, արուեստն ողջ մատնում այ[10]։

Երկու գետիս՝ Երասող այ[11] սա՝ Կուր այ[12] նա.
Բարուն ներհակ՝ ով չար կանէ՝ կուր այ նայ[13].
Ինչ մարդ մեծին երախտիքն կուրանայ[14],
Նա Հուդայ, այ որ իր տէրն մատնում այ։

Ո՛վ բանացուց իւր հաստ պոչն, մեծ ագին,
Ջեռնէն բռնեն մեծարք կանեն մեծ այգին.
Ինչ էշ որ մեկ քար ունենայ մեծագին՝
Հերիք այ որ ոսկու վերայ մատնում այ[15]։

Գիմ Ստեփանս յաւին անունն ո՞վ կու տայ.
Ցրուող է շատ՝ դու վաստակես՝ ո՞վ կու տայ[16].
Ջարմանք է թէ՝ ո՞վ կու գտէ, ո՞վ կուտայ[17].
Ջեռն ումն այ, մատնիքն ումն այ, մատն ումայ[18]։

---

16 Նավակի համար։ 17 Նավաստու։ 18 Հատկությունից։ 19 Աղբյուրի ակից։ 20 Գոհարից։ 21 Խմորեղեն է։ 22 Բովի մեջ։ 23 Առանձնացածին։ 24 Սովորեցրու։ 25 Մի կույս է։ 26 Թող լաց լինի։ 27 Համրանա։ 28 Խոսիր։ 29 Դափնիների խմբին պատկանող անուշահոտ ծառ։ 30 Ըստ Բիբլիայի Դավթի որդի Ամոնը ամուսնացավ իր քրոջ հետ։ 31 Հոտավետ ծաղիկ, որից հոտավետ յուղ են պատրաստում։

1 Միշտ մատնում է, ցույց է տալիս։ 2 Խմել իմաստով։ 3 Աղորիք ես։ 4 Խաղողի որթն ումն է։ 5 Դրամ խաղալու իմաստով։ 6 Տանուլ է տրված։ 7 Բամբիռը։ 8 Ծար նվագիր։ 9 Եղանակ։ 10 Մատների խաղի մեջ է։ 11 Երասխ գետի մասին է խոսքը։ 12 Քուռ գետի մասին է խոսքը։ 13 Կույր է նա։ 14 Ուրանում է։ 15 Ջեոք է դնում։ 16 Ո՞վ է տալիս։ 17 Ո՞վ է ստանում։ 18 Մատն ումն է։

ԹԱՋՆԻՍ[1] ՀԱՑԵՐԷՆ ԱՌ ԵՐԱԽՏԱՄՈՌԱՑ ՈՄԱՆՍ։ Ի ՍՏԵՓԱՆԷ ԴԱՇՏԵՅԻՈՅ

Սիրելի՛, ի՞նչ կուտաս քո հացըդ չարին[1].
Զեանէդ կառնու՝ կերթայ ըղհետ շանդ կուտայ[2].
Քոյ լաւիդ փոխարէնն ոչ օր մի չարին[3].
Ինչ բրդեցիր՝ յէնց իմացար՝ շանց կուտ այ[4]։

Տեսողութեամբ սէր ի տեսնում անհոգ ի[5].
Սիրով առ նա անհոգ կէրթի, անհոգ գի[6].
Ո՞վ իմանէր մեկ անօրէն անհոգի՝
Հացս կառնու տանի ըղհէտ շանց կուտայ։

258 || Ե՛րբ ես տէսել վատին օրը շատ քաշէ[8].
Քեղնից քաշողն՝ քան դքոյ շունն շատ քաշ է[9]
Գողանալով ասուց-անդից շատ քաշէ[10].
Թող հաւաքէ, իրան նման շանց կու տայ[11]։

Փոխարէնն ում հագցրիր լավ հալաւ.
Սիրտն էր չար՝ լեղուօք կասէր լաւ, հա լաւ.
Հերիք է թէ հոգիդ մարմինդ լաւ հալաւ[12],
Քշէ երթայ, փողոցներում շանց կու տայ[13]։

Նորմէ[14] կասեմ՝ նա գիտուն էր՝ անգէտ ես.
Էնպես գիտունն՝ քան զանասուն, անգետ՝ տես.
Ո՞վ Ստեփան, դու է՞ր այդչափ անգէտ ես.
Էն խո վաքն կերպարանքէն[15] շանց կուտայ[16]։

Էջ 260 Ա՜հ, ա՜հ, հազար[1] ահ

Իմաստութեան գտակին[2]
Թաղ գիր տեղի գըդակին[3]
Մինչ ամուրի կարծէի՝
Երբ գիտացի՝ գտայ կին։

Տանիս բացահայտ ելի[4]
Ջանամ բացայատ ելի[5],
Ամօթն գիս աբգելեց՝
Չէթող բացայատ ելի[6]։

Տէրն էստից՞ հոգի տայ կին.
Քայց է նայ հոգի տայ կին.
Հոգիս մարմնումըս մաշեց՝
Մարմինս հոգի տակին։

ԿՐԿԻՆ ՎԷՐՔ

Հայրն իմ խնդաց սերմանէս.
Ես իւր հալալ սերմանն էս[8].
Երկու են իմ ձիթենիք՝
Նախկինն է՞ իմ սերմանէս[9]։

---

1 Զար մարդին։ 2 Ուտում է։ 3 Ոչ մի օր, ոչ մի բան չարացին։ 4 Կիսայրված հաց է։ 5 Անհոգ էի։ 6 Գայի։ 7 Ուտում է։ 8 Տևի։ 9 Ցածր է։ 10 Կտա։ 11 Ցածր է։ 12 Հալվեց, մաշվեց։ 13 Ցույց է տալիս։ 14 Նորից 15 Արտաքինից։ 16 Ցույց է տալիս։

1 Բնագրում հայկական թվականով Ռ՝ փոխանակ հազար։ 2 Կտակին։ 3 Գլխարկին։ 4 Դուրս եկա։ 5 Բացակայեցի։ 6 Բացայայտվի։ 7 Այստեղից։ 8 Սերմ։ 9 Սերմածը։

272 || ՈՏՔ ՇԱՐԱԴՐԵԱԼ Ի ՆՈՑՆՈՑ ՍՏԵՓԱՆՆՈՍԷ ԴԱՇՏԵՑԻՈՑ Ի ՎԵՐԱՑ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԻՐԱՑ

Տղէղ ղրկէ աղունի[1],
Մեր հացն շատ աղ ունի.
Լեր խորաղէտ օձի պէս՝
Միամիտ գինչ աղունի[2]։

Այս աղալոյ արկան է[3],
Կնոջն չէ՝ արկան է[4].
Ջուր յերր[5] անխիղճ մտքերով
Զիս ցաւէցաւ արկանէ։

Խօջան[6] ցաւօք պարկած է,
Ծանկն[7] կառնու պարկ կածէ.
Սէր կանէ խեռ մեծ իշխն,
Ձեռնէն բռնել պար կածէ։

Քամին փչել կարկտան[8],
Հին շորիս՝ նոր կարկտան.
Ցետին օրէն հաղուստիս՝
Նստել լալով կարկտան[9]։

Ընկել էր մարդի շարէն,
Զիմացաւ մարդ իշարէն[10]
273 || Փրկէս աղ ու հացակեր,
Հացընկեր մարդի շառէն։

Այտք[11] քո, դերին արին ոտ[12],
Մարտում կեղնի արին ոտ[13].
Մի՛ մըխեր զսուր քո սիրտ իմ,
Արնէս կեղնիս արինոտ։

Շիտկեմ[14] քեզ էրկու մաշի[15],
Հանդերձդ լաւ էր կումաշի[16].
Ստեփանն որ զքեզ կու սիրէ՝
Կասեն թէ էր կու մաշի։

Առող[17] մաղեր, առող գիս[18],
Արտասուեմ որ առողիս[19].
Քանի՜ արիւն լացցնես՝
Մեկ հետ արի առ հոգիս։

Մի անհատ եմ, կամ եղէն[20],
Կամ առիւծէն, կամ եզէն.
Ո՛չ ոք չասէ մեզ չունիմ՝
Ինչ մեղք ունիմք՝ կայ մեղէն[21]։

Կեննն առեր է թողեր րէ[22],
Կրակտ գիս թող երէ,
Սրտէս արիւն կու թափի,
274 || Քանի ձեռաց թողեր է։

Քանի քաշես ինձի սուր,
Պոկէղ[23] նշան ինձի տուր.
Ցետոյ զղերիս թէ կամիս՝
Առիւծոյ եւ ինծի[24] տուր։

Բախտն որ ցողէ՝ գետ[ն] ինչ է.
Խօսքս աղերին[25] գետին չէ[26],
Օրկնքումն ինչ և պարծի՝[27]
Էն երկինքն այ, գետին չէ։

Եմ մի մսէ մի արնէ,
Մի կնոջէ մի առնէ[28].
Լինիմք մի հօտ մի հովիւ՝
Եթե աստուած մի առնէ[29]։

Վեւին առջեւն ի՞նչ կայ՝, սէ[30],
Ի՞նչ կալ դնէ, ինչ կալսէ,
Տեղիս ստասաց մարդն՝
Րասաստանում ինչ կասէ։

Աղքատին հացն էր կուտան[31].
Ծոյլ մարդոյն վարձ էր կու տան.
Աստուած չանէ որ մէկ կին
Ոտն դնէ էրկու տան։

275 || Առողջն այ քաղցր, դառն այ ցաւ,
Սիրտս այս ցաւէս դառնացաւ.
Էրկու այսպես դառնութիւն
Երբ մինտեղվի՝ դառնայ ցաւ։

Միշտ լաւ ժիր կաց՝ լաւ, արի
Առ իս[32] լաւ երթ, լաւ արի.
Բարւոյն ընդդէմ շատ մեղայ՝
Հենց իմացայ լաւ արի։

Տիւնին կպած լաւ կայ րէ[33],
Պատանակարդ լաւ կարէ.
Բարւոյն կասէ ոչ գիտեմ,
Բայց չարութիւն լաւ կարէ[34]։

Թէ առիւծ չէ՝ ինծ է նա,
Օտարի չէ ինձ է նա.
Բոլոր դիշերն կու նայիմ՝
Խղճա դերոյս, ինձ ձէնայ[35],

Տեսի՞ր դրացինքդ ինչ չար ին[36],
Խէտ էս դերոյս ինչ արին,
Գանկատախառն արտասուքս
Կիջնու աչքէս ինչ արին[37]։

---

1 Հացահատիկ աղալու։ 2 Աղավնի։ 3 Աղորիք։ 4 Արական է՝ տղամարդու գործ է իմաստով։ 5 Մինչև երբ։ 6 Միծահարուստ առևտրական։ 7 Դրամը, ոսկին։ 8 Կարկուտախառը։ 9 Կարում են։ 10 Ակնարկը։ 11 Այտերիդ։ 12 Ռնատակ։ 13 Քաջը ոտքի կկանգնի։ 14 Շինեմ, հարդարեմ։ 15 Մաշիկ, ոտնաման։ 16 Մետաքսի լավ տեսակ։ 17 Փարթամ։ 18 Ծամեր, գիսակներ։ 19 Զվարթանաս, ուրախանաս։ 20 Մեկից, եղակի։ 21 Մեղանից։ 22 Կ տառը վերցրել է Ր-ն թողել։ 23 Շրթունքներիցդ։ 24 Կատվազգի գիշատիչ։ 25 Աղա մարդկանց։ 26 Անարժեք չէ։ 27 Փայլի։ 28 Մի մարդուց։ 29 Ի մի բերի։ 30 Վ տառից առաջ Ս տառն է։ 31 Ինչու են ուտում։ 32 Ինձ մոտ։ 33 Տ տառին կպած է Ր տառը։ 34 Կարողանում է։ 35 Ձայն տուր։ 36 Չար են։ 37 Ինչպես արյուն։

Մատաղ կեղնիմ ես գիտնուն,
276 || Վասն գի դու ես գիտուն,
Ծիծաղելով գիր գէմս՝
Երբ որ դրսէն ես գի[38] տուն։

Վատ խոսքին գինն ինչ կու տան
Ուր ակ ոչ է՝ ինչ քուղան[39],
Ջուխ եւ գգիշեր կրակումդ
Կուխորովիմ ինչ կուտան[40]։

Լոյսն գունոց որակն էր,
Ո՛ր աղբիւրն էր, որ ակն էր[41]
Խեթի[42] կասեն նայեց քեզ՝
Այն խաւարած որ ակն էր[43]։

Երկինքն ի թուխպ կարկուտի[44],
Անձն իմ շալքէս կար կուտի,
Կասիր հացէս չրկերար՝
Եթէ յառջեւս կար՝ կուտի[45]։

Ձեր ծուռ խօսքից ինչ կասեմ,
Ուր ո՞չ գոյ գուռն՝ ինչ կայ սեմ[46].
Ամռան էանց կայ չունիմ,
Ձմառն օրում ի՞նչ կալսեմ[47]

Ստեփանն հօրէ մինակն է,
Զարկամդ եղնի մին ակնէ[48],
277 || Սիրելիս երբ կու ճռճայ[49]
Գիտես գնոջ մին ակն է[50],

Նա դուսինն[51] է, սա տունին[52],
Ըղնա թողնին՝ սա տանին.
Լեզուն ուրիշ, սիրտն ուրիշ՝
Աշակերտն է սատանին։

Մեր հանդերում շատ կայ ցին[53],
Վատին գլխոյն՝ շատ կացին,
Զարքն աշխարհումս օր մ՚ ապրին՝
Կասեմ ափսոս շատ կացին[54]։

Երես[55] ով է, խոր ով է.
Մեր ջրերն խորով է[56].

Իւր մեզքն այլոց բամպասողն
Որտեղ տեսնուս՝ խորովէ։

Մին գուհար այ, մի ակն այ,
Երբեմն ինձի մին ակնա[57].
Ստեփանիս օր ու արեն
Մինակ նայ այ, մինակ նայ։

Սիրելիս, սիրուն առն է[58],
Սիրուն տուր, սիրուն առն է[59].
Աչքս դէշին չտեսնու՝
278 || Թող հոգիս սիրունն առնէ։

Սիրուն ժամ, սիրուն պահ է,
Զքեզ նորա սիրուն պահ է,
Գէշին երեսն է կշկուռ[60].
Թէ գիտես՝ սիրուն պահէ[61]։

Շուռ դամ[62] սիրուն ընկերի,
Սաւանն[63] սիրունին կէրի[64].
Գէշին պարոն[65] չեմ եղնիր,
Կեղնիմ սիրունին գերի։

Ստեփան, ճլ, սիրունն է լաւ[66],
Շունչս այնոր սիրուն էլաւ[67].
Գէշ կատուն ի՞նչ կու պահես՝
Ինչ պահես՝ սիրունն է լաւ։

Սիրունն է միշտ սրտի սէր,
Սիրով կուտայր սրտիս սէր.
Լեզուս ասաց միշտ անկեղծ՝
Ինչ որ մեջ իմ սրտիս էր։

Ի՞նչ ակու ի[64], ինչ դաղ ա[65],
Երբ կուտ[66] չունիմ՝ ի՞նչ դաղ աղայ.
Երբ աստուած է սրտացէտ՝
Ստեփանս մարդէ ի՞նչ դադայ[67]։

279 || Մանող ամ բարակաման[68],
Հաստ խելքի՝ բարակ աման.
Դու քեզ բարեկամ դառձիր,
Զասիս՝ ողջ բարեկամ ան[69]։

[38] Գայի։ [39] Բարձրամտութիւն։ [40] Կիսով չափ այրված հաց։ [41] Աղբյուրն էր։ [42] Խեթ ձեռվ։ [43] Աչքն էր։ [44] կարկուտով թխպած։ [45] Կուտի։ [46] Շեմք։ [47] կալսեմ։ [48] Միաչքանի դառնա, այսինքն կուրանա։ [49] Նազ է անում։ [50] Թանկագին քարն է։ [51] Դրսիցն է։ [52] անեցի։ [53] Ուրուր։ [54] Մնացին։ [55] Թեթեւոլիկը։ [56] Հորից է կամ խորից է։ անցին քար։ [57] Մեկ նայիր։ [58] Տղամարդ է։ [59] Սիրունն առնի։ [60] Ձեչոտ, բառացի՝ հանգույց։ [61] Նրա սիրո համար պահիր։ [62] Պտույտ գամ գլխովը։ [63] Զագրանէ [64] Կայրի։ [65] Տեր։ [66] Գեղեցիկն է լավը։ [67] Դուրս եկավ։ [64] Զավար է։ [65] Գաղս—հասկանալի չէ։ [66] Հացահատիկ։ [67] Թագցնի։ [68] Բարակաթել։ [69] Բարեկամ են։

Հաւքն[70] իջնուն դէշին[71] համար,
Ես չտամ գէշին համար.
Զլինէր սիրունին սաւան[72],
Հայելին՝ դէշին համար։

Ծառն կաճի շունչ չունի,
Շատ չօպան կայ շուն ունի.
Ո՛վ երկու տակ կու խօսի[73],
Նա հոգի չէ, շունչ ունի։

Բեռն ունիս ջուլու խակէն[74],
Ե՛կ ջոկէ ջուլը՝ խակէն[75].
Լաւն ընկաւ, վատը կանգնաւ,
Էս դեղիս ջուլրխակէն[76]։

Անուշ քոզը՝ անուշ շար այ[77],
Նիստ ակունքդ անուշ, շարայ[78].
Եղրորդ արևն կու սիրես՝
Մէկ թաս տամ անուշ արա։

Մէկ մտացս՝ մէկ կամիս՝[79]
280 ‖ Մարդ փորձելն է մէկ ամիս.
Էն դիս խարեց՝ որ կասէր՝
Մէկ ոսկո ենք մեզ, մէկ այ միս։

Սևն լաւ է քան դեղնի[80].
Լավ կինրդ քոյ տան դեղն ի.
Աստուած չանէ՝ թշնամիդ
Սիրելւոյ պես տանդ եղնի։

Քո սիրտդ միշտ առիս[81] էր,
Թեք կունայիս առիս՝[82] է՞ր.
Ինչ նախանձ կէր ծախեցի,
Հոգոյս բաժինն առի[83] սէր։

Էս մեր պապենց իդին է[84].
Դլխիս ցաւն է ի դինէ[85].
Մեղքն, որ դրախտէն մեզ հանեց
Արուին խո չէ՝ իդին է[86]։

Քիչ կու դտնուս աղէկ կին.
Եւ կամ աղէկն՝ աղէկին[87].
Սոդոմայ մեղքն[88] արաւ
Ղօվաայ կինն աղէ կին։

Մին վէրին է, մին տակին.՝
Աշխարհս ոչ է մինտակին[89].
281 ‖ Աստուած չտայ՝ էրկու կին,
Թէ տալեց այ՝ մին տայ կին[90]։

Ո՛վ մեղ չարաւ, մարդ այն է,
Մարիամ չէ՝ Մարթան է.
Աստուած չանէ որ մէկ կին
Երեք կամ չորս մարդ առնէ։

Կամ Շամիրամ, կամ Արա,
Կամ ուսուցո, կամ արա.[91]
Աղնիւ կերպիդ լոյսն միշտ
Տիւ եւ դիշէր կամար այ։

Մինչ դու գլորիս՝ լայ վերին.[92]
Երեցն ուտէ լաւ էրին[93].
Վատով աշխարքս լցուաւ՝
Տեղ չմնաց լաւերին։

Շալ[94] հադայ կապի[95] տակէն,
Թէ պոծայ կապի տակեն,
Փրկես քոռէն, քաչալէն,
Կաղէն եւ կապիտ ակէն[96]։

Տէր կիս չտաս անկողին[97],
Ոչ չար վարք իմ այն կողին[98].
Չտաս լաւին հին դդեստ
282 ‖ Եւ ոչ չարին անկողին։

Հայրս կու դայ ի շինէ[99],
Օն աւերէ՝ ի շինէ.
Լաւին հարկիք չմնաց[100],
Ինչ հարկիք կա՝ իշին է։

Երեխին աչքն էր կաթին,
Ոսկիդ մի տար էրկաթին[101].
Օր և դիշէր արտասու՝ քս
Չգիտեմ աչքէս է՞ր կաթին։

Ուրիշ ես եմ, ուրիշ էն՝[102]
Շինէս գնամ ուրիշ շէն,
Ի՛մ ձեռնէս ունիմ գանգատ՝
Ի՞նչ դանգատեմ ուրիշէն։

---

70 Այստեղ գործ է ածվել դիշատիչ թռչուն իմաստով։ 71 Լեշի։ 72 Զադրա, ծանկություն։ 73 Զարախոսություն է անում։ 74 Ջուլհակի արտադրանքից։ 75 Սուտը՝ ճշտից։ 76 Ոստայնից։ 77 Շարք է։ 78 Շարիր։ 79 Ցանկանում ես։ 80 Փոխեն դեղնի հետ։ 81 Ինձ հետ էր։ 82 Ինձ վրա։ 83 Վերցրի։ 84 Այդին է։ 85 Գինուց է։ 86 Կնոջն էր։ 87 Լավը՝ լավին։ 88 Արվամոլություն։ 89 Մի տակ՝ բարակ միակերպ իմաստով։ 90 Թե տալիս է՝ մի կին տա։ 91 Կամ սովորիր կամ աշխատիր։ 92 Վերինը։ 93 Ոչխարի թին։ 94 Բրդի կտորից վերնազգեստ։ 95 Պարեգոտ։ 96 Կապույտ աչքից։ 97 Հիվանդության։ 98 Կողակցին։ 99 Գյուղից։ 100 Հարդանք, մեծարանք։ 101 Մի փոխիր ոսկին երկաթի հետ։ 102 Ուրիշ նաւ։

Կուզեմ շինեմ ուրիշ շէն,
Ի՞նչ ակն[103] ունիմ ուրիշէն.
Ջառ[104] իշապան չտեսի՝
Դանդառ անէր ուր իշէն[105]։

Էս մեր ջաղցին նաշիհն այ[110],
Բան[ն]են այ որ նա շինայ[111],
Ո՛վ օտարին լաց կուզէ՝
Լացն վեր իւր նաշին այ[112]։

Էլ մեղք չկա գործելի[106],
Քան զոր հառաջ գործելի[107].
Տսի՛ր ստասաց մարդին
Երեսին մուք գործելի[108]։

Էլ շինիր որ էլ դառնայ,
Սա ոչինչ չէ էլ դառնայ.
Տերն ոչ տայ աղքատութիւն՝,
Բան զմահն էլ դառն այ[113],

283 || Լեղակ ունիմ Լաւուռի[109],
Լաւ նշենի, լաւ ուռի.
Ո՛վ սրտումն փքանայ,
Դուն էլ փուք տուր՝ լաւ ուռի[109ա]։

Դինին ած տուր երկու՝ լի,
Զլնելացուն[114] է՞ր կուլի[115],
Թե շարթէն ինձ հաց մի տէր՝
Ես այսպես դառն է՞ր կու լի[116]։

168 || ԾԻԾԱՂԵԼՈՑ ՎԱՐՍԱՂ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ԴԱՇՏԵՑԻՈՑ

Սրղա դէյիմ ըեղլար, բիր խաս աթում վար,
Ըշլամաղ այեաղի, էլի աթըմուն,
Դուրուփ, լարլարինի ամիշ, գիւլայիր,
Գեօզը քուր, գիշլարին, գիլի աթըմուն։

Տարիսինի ղարուրղադան սօքըլմիշ,
Սըմուքլարին մուղամ ինան քեօքըլմիշ,
Եալ ղոյրուղին թամամ թուքին խօքըլմիշ,
Թալչխա գիրուփ դուր դըլի աթըմուն։

Եա բիր աթունխսայ, բէյլայ աթ օլայ,
Հաւա գիւն զօրմասա, դուրսաղ աթ օլայ,
Զամուրղա դուշա դուշ բաթարաթ օլայ,
Բօյանսա սաղ իլա սօլի աթըմուն։

Ֆասլի դուր օքչալայ, բիր սուր, բիր նայ դուր,
Բու նաջիմ սօլու դուր, աթլարդան սայ դուր,
Եաշինդան քուչուգ դուր, նօջունդադուր՝
Եթմիշա բասուփ դուր իլի աթըմուն։

Արբի սալար բունուն վաթանին քեօի,
Դութալար ղաթինի, ասլինի, սօի,
Ղրաղըլար ֆարխանդասին ղարդալար թօյի,
Հար ղաման աչանդայ բէլի աթըմուն։

Նաշտու լամս երիշին աջապ քարէղար,
Ջավաղնի զօրանդայ աղլար ղարեղար,
Բիր ըշարաթ էխսան, ջան նըսր էղար
Ասիլ դուր ուլուսի, էլի աթըմուն։

Իքրահ էղար օղին եօլայ ղաթինջայ,
Եմին սախլար գիշ ալթինդայ եաթինջայ։
Նաֆասին արդինդան հաւայ աթինջայ
Նըւախտ չալար բամբի, գիլի աթըմուն։

---

[103] Սպասելիք։ [104] Ուրիշ։ [105] Իր իշից։ [106] Գործածվող։ [107] Դործելի [108] Մուր քսիր։ [109] Լահոռ քաղաքը Հնդկաստանում։ [109ա] Փքվիր։ [110] Մանր աղացած ալյուր։ [111] Պատրաստի, կառուցի։ [112] Դաղաղին է։ [113] Զլինելու բանը։ [114] Դառն է։ [116] Ինչու պետք է լինի։

ԱՒ ՀԱՆԴԷՐՁԻՒՔ ՄԻԱՅՆ ԵՐԵՒԵԱԼ ՎԱՐԴԱՊԵՏՍ ՈՄԱՆՍ, ՈՐՔ ՉԵՒԱՆԱՆ ԻՐՐԵՒ ԶԳԻՏՈՒՆՍ՝ ԹԵՐԵՒՍ ԵՐԿԱՅՆ ՄՕՐՈՒՕՔՆ ԻՒՐԵԱՆՑ

Սոսկ մտածմունքն՝ ոյք կարծեն զոլ սատման բայից[1],
Յայնց ոչ օգտեն ամանակաց պարագայից[2]։

Տրամաբանեն առ ի կոչել վարդապետք եւ զետք[3],
Բայց ընարանն և վերջ բանին՝ չլինին հանգէտք[4]։

Երկրաչափք են, զոր զչափ բլրոյ մի ոչ գիտեն,
Բոկոտնեայք են, ձիարշաւացն ըզհետ միտեն[5]։

Փութան վիճել ոչ իրավմամբք, թերևս թիւր.
Տալ յարշաւումն ի մէջ դաշտաց զերիվարն իւր։

Աւաղ է յոյժ, զի գիմաստունս կորուսաք.
Բարձրայօնալք[6] ըզկարկաջումն[7] յաւէտ ուսաք[8]։

Ներիմաստից կամին առնել վէճ եւ ըզդաւ.
Բայց ոչ դիտեն զորոշել զլերկն և զթաւ[9]։

Նրմանիք են ներկա հաւուցն[10] համասարաս[11].
Կոչին ներկողք, բայց ոչ ունին դներկ և զկարաս։

Ոլորտալուր[12] հողմով փողու ուժգինս հնչեն.
Իսկ դար կոճատն[13] ո՛չ իմանան եթէ զինչ են։

Սուր կնճթաւքն երեւին զոլ բազմաց գիտուն,
Ի հրացանելրն ուժ կրին և ամօթ, լինին նկուն[14]։

Իսկ թէ ոմն հաւատակցած հարցանէ բան.
Կամ դապերանս[15] հատուցանեն, կամ բիր[16] և զդան[17]։

Էր բարւոք զկերպն զիտելոյն նախ ուսանիլ։
Ապայ նոյնոյ գիտութեանն տալ բուսանիլ։

Անդ է ծիծաղն, ուր աղքատիկն զոլ պարծի.
Ըզհարբստօքն որ ընչաւէտ միշտ զոլ կարծի։

Յոռի է միշտ մակացուած ձգելն ըզքող.
Մինչ տան կարծել զոչ ունեցեալն իբրև զունող։

Ստեփանո՛ս, զի՞ կայ քո բանն առ այս խնդիր[18],
Զոր ինչ լսես, մի մորնչալ[19], այլ ունկն դիր[20]։

---

1 Որոնք իրենց մեծ քերականներ են կարծում։ 2 Ժամանակի պարագայից։ 3 Ա-ռաջնորդներ։ 4 Հասու չեն։ 5 Մրցում են։ 6 Ամբարտավանացած։ 7 Շատախոսութիւն։ 8 Սովորեցինք։ 9 Կետադրական նշաններ են։ 10 Գապերին։ 11 Բազմակերպ։ 12 Զորա կողմից հնչվող։ 13 Զուլգ և կենա։ 14 Նվաստ։ 15 Հաստ զավազան։ 16 Զարիք։ 17 Մեծ։ 18 Ինչ գործ ունիս։ 19 Մի բարկացիր։ 20 Լսիր։

ՈՏՆԱՇԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՂՋՈՒԿ Ի ՎԵՐԱՅ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԵՑԻՈՑ
ԱՍԱՑԵԱԼ ՍՏԵՓԱՆՆՈՍ ԴԱՇՏԵՑԻՈՑ

65 բ 1 Շինիս դաստուրն[1] և ծէսն էս այ,
9 կր. Որ օտարի անազ կաննեն,
Ինչ կու խօսին՝ շատ կէսն էս այ,
Որ օտարի տնազ կաննեն։

2 Նուստա[3] շինիս զօվլու զարար[4],
Ստերն քան ըղզեր վարար,
Ինչ կու խօսին՝ ազզէ զարար,
Դեռ օտարի տնազ կաննեն։

3 Բարուն հիւանդ, առ չարն չազ,
Ղազունց տան ժիր, ժամուն կազ,
Ներսն չարիք, դուրսն ծիծաղ,
Դեռ օտարի տնազ կաննեն։

4 Քուրդի փող տան կեռիք սրեն
Տափիկ տափիկ հիմքեր բրեն,
Ինչ տեսել չեն սուտ սուտ գրեն,
Դեռ օտարի տնազ կաննեն։

5 Դուրսն դմակ, ներսն դանակ,
Ամեն չարիք հազար գունակ,
Թամամ երկրում վատ օրինակ,
Դեռ օտարի տնազ կաննեն։

6 Քուրդին սիրում, եղբօրն ատում,
Ոխն սրտում սիրկ պատատում,
Դատմունքն ողջ մեղքօվ դատում,
Դեռ օտարի տնազ կաննեն։

7 Քանի հայ այ տան պատէ պատ,
Ով քուրզացաւ՝ ազաթն է շատ,
Ծօլին հետ սէր, պատրուն[9] հետ վատ
Դեռ ուրիշի տնազ կաննեն։

8 Երբ բան ունեն՝ ոտաց հող ան,
Դէմ դէմ կանգնեն սուտ սուտ գոզան,
Ցերբ պըծանեն զօռթ տան սողան,
Դեռ ուրիշի տնազ կաննեն։

9 Ողորմորան[10] եկ օղէս հուր[11],
Մին ժամ ոսպ տան մին ժամ ապուր,
Էգսն[12] թակեն փոսնս[13] տուր
Դեռ ուրիշի տնազ կաննեն։

10 Ում խեղճ տեսնեն կը տան մահլամ[14],
Էն էլ կանչէ գլխից գուլամ[15],
Ջուր[16] դարդակեն շինեն դուլամ,
Դեռ ուրիշի տնազ կաննեն։

11 Ով մեկն ասայ՝ կը տան քայի,
Ջում[17] դու ասիր ես չասացի,
Սարար[18] դառնան մանտան հայի,
Դեռ ուրիշի տնազ կաննեն։

12 Ով անմեղնայ խուրէնց թաղին,
Ուժով փուք տան շինեն զաղին[20],
Յետնէն զօռթ[21] տան կուշտ ծիծաղին,
Դեռ ուրիշի տնազ կաննեն։

13 Ով որ պաքին լզեց թանն[22],
Թամամեցաւ նորա բանն.
Ինչ բամբաս կա՝ ժամստանն
Դեռ ուրիշի տնազ կաննեն։

14 Ամեն սրտում լաք[23] հազար քէն[24],
Մինն գէս քաշէ, մինն դէն,
Ամէն ծակից թուռլու ձէն[25],
Դեռ ուրիշի տնազ կաննեն։

66 ա 15 Ո՞ւմ կայ կարդալ, կամ ում կայ ջանք,
Մեծ ու պստիկ աստուածարանք,
Վանքն է քուրդի արծաթահանք,
Դեռ ուրիշի տնազ կաննեն։

16 Աշքար պաք են, շատ կէսն ծում,
Մարդի միսն ուտում հում հում,
Մոծակ դարձել արուն ծծուն,
Դեռ ուրիշի տնազ կաննեն։

17 Դիր գրող են՝ կետ չեն տալիս[26],
Բանն հացի հետ չեն տալիս,
Ում ձիռն ընկաւ յետ չեն տալիս,
Դեռ ուրիշի տնազ կաննեն։

18 Ով մի կաթ թան քսեց շուրթն
Կեռքով դուս դուս կըտան լուրթն
Ինչ փուչ բան կայ դցեն քուրդն,
Դեռ ուրիշի տնազ կաննեն։

---

[1] Օրենք, սովորութիւն։ [2] Մաղր։ [3] Որտեղից է։ [4] Կարգ ու կանոն։ [5] Վնաս։ [6] Գինեստան։ [7] Ծածուկ։ [8] Ամուր կապում։ [9] Կաթոլիկ հոգևորական։ [10] Ողորմի հորդ։ [11] Հյուր։ [12] Հաջորդ օրը։ [13] Ճաշկերույթի մեջ արված հանդանակություն։ [14] Դեզ, սպեղանի, ծաղրելու իմաստով։ [15] Ծառա եմ, ստրուկ եմ։ [16] Մինչև։ [17] Թէ։ [18] Պատճառ. վատության իմաստով։ [19] Մի կտոր։ [20] Ծաղրի առարկա։ [21] [22] [23] Բազմահազար։ [24] Ոխ։ [25] Տեսակ-տեսակ։ [26] Կետադրական եղանակ չեն նշանակում։

19 Մօլին փուք տան մէջտեղ ցրցեն,
Ինչ ծակ տեսնեն ոսկով լցեն,
Բեզերն սրեն, ձեռներն կցեն,
Դեռ ուրիշի տնաղ կանեն:

20 Սրտերն լի խութ, լեզվինն կոկ,
Օտար հախն[27] կեռքով տան պոկ,
Լեզուում ջոկ, սրտինն Գոկ,
Դեռ ուրիշի տնաղ կանեն:

21 Հրմներ ունեն՝ ասաց բրեն.
Սուտ սուտ մազարատ[28] նստին գրեն,
Մին թաս գինու չոք[29] տեղ մհրեն[30]:
Դեռ ուրիշի տնաղ կանեն:

22 Քալանթարին[31] սուտ սէր գցեն,
Բանեբ կապ տան մէջն գցեն,
Դեռ չեն դրել շուտ վէր գցեն,
Դեռ ուրիշի տնաղ կանեն:

23 Ողջ քուրդի են գցել ձեռն,
Աստուած շինել կէռ ու մէռն,
Պիտի շինէս դուրս գոյ նեռն,
Դեռ ուրիշի տնաղ կանեն:

24 Քալանթարն են դրել դէնն,
Քուրդ դարուգի[32] հետն այ ձէնն,
Դափօվ զուռնով բերեն չէնն,
Դեռ ուրիշի տնաղ կանեն:

25 Շամբայ[33] դրկից թե չէր, Ջուղայ
Ջումին կանչում քուրդ դարուգայ.
Իւրէնց էրգին շինում բուգայ[34],
Դեռ օտարի տնաղ կանեն:

26 Ծուռն մեկնեն[35] մեկն ծռեն,[36]
Երբ երես տաս, դուրս կու թռեն,
Գենտ կու հազար, Գուխտ կու...
Դեռ օտարի տնաղ կանեն:

27 Ստեփան, աչքումդ ունես գերան.
Ոչ չոմին[37] ես, ոչ փրփերան,?
Մեղայ, ասա հազար բերան,
Ջում ուրիշի տնաղ կանես:

---

[27] Վարձ: [28] Վնասակար դիր. [29] Ջոգս տեղ: [30] Կնքեն: [31] Գյուղապետ: [32] Ոստիկան: [33] Ջուղայի հարևան գյուղերից է: [34] Ցուլ: [35] Մեկնաբանել: [36] Մեկնած: [37] Սպանաղ: